02

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

41 (1440) • 1 նոյեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Արման Սարգսյանն այցելեց մարտական դիրքեր

Հոկտեմբերի 27-ին ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանն ու ոստիկանության զորքերի հրամանատար Վահե Ղազարյանն այցելեցին հայ-ադրբեջանական սահմանի մարտական դիրքեր, որտեղ մարտական հերթապահություն են իրականացնում ոստիկանության զորքերի ծառայողները:

Արման Սարգսյանը հանդիպեց սահմանապահ ոստիկաններին, ծանոթացավ նրանց կենցաղային պայմաններին, սպառազինությանը, հետաքրքրվեց ծառայության առանձնահատկություններով:

Շնորհակալություն հայտնելով դիրքապահներին հայրենանվեր ծառայության համար՝ նշեց, որ նրանց թիկունքն ամուր է ծառայակից ընկերների շնորհիվ: Իսկ որքան ամուր է սահմանապահի թիկունքը, այնքան մարտունակ է դիրքում կանգնած ծառայողը:

Արման Սարգսյանի հրամաններով՝ բարեխիղճ ծառայության համար ոստիկանության զորքերի մի խումբ ծառայողներ պարգևատրվեցին արտահերթ կոչումներով, կրծքանշաններով ու պատվոգրերով:

Մարտական դիրքեր այցի ավարտին ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը սահմանապահ ոստիկաններին մաղթեց խաղաղություն, անփորձանք ու բարի ծառայություն:

Թաքցվել է 700 միլիոն դրամի շրջանառություն

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 2003 թ. նոյեմբերից 2018 թ. հուլիս Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի տնօրինությունը, առանց ֆինանսների նախարարության թույլտվության, մարզադաշտի տարածքում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն: Մասնավորապես, կազմակերպվել է ծաղկի մեծածախ վաճառքի տոնավաճառ եւ ծաղկի առեւտրով զբաղվող անձանցից օրական հավաքագրված 160-հազարական դրամը մասնակի է մուտքագրվել դրամարկղ: Նաեւ հավաքագրվել է շուրջ 849 միլիոն 600 հազար դրամ, որից ձեւակերպվել է ընդամենը 149 միլիոն 520 հազար դրամ: Այդ կերպ թաքցվել է 700 միլիոն դրամի շրջանառությունը եւ չի վճարվել առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 97 միլիոն 861 հազար դրամի հարկեր:

էջ 2

Հետախուզվում էր սպանության համար

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության ու Մալաթիայի բաժինների եւ ՊՊԾ գնդի ծառայողները հոկտեմբերի 31-ի վաղ առավոտյան մայրաքաղաքի Վահրամ Փափազյան փողոցի շենքերից մեկում հայտնաբերեցին Երեւանի 23-ամյա բնակչին, որը հետախուզվում էր սպանության մեղադրանքով:

Հոկտեմբերի 9-ին Երեւանի Անդրանիկի փողոցի 130 շենքի բակում զինված միջադեպ էր տեղի ունեցել, ինչի հետեւանքով հրազենային վնասվածքով հիվանդանոց էր տեղափոխվել 29-ամյա երիտասարդի դի: Դեպքի վայրում օպերատիվ-քննչական խումբը հայտնաբերել էր հրազենի պարկուճներ, գնդակ, արնանման հետքեր: Հարուցվել էր քրեական գործ:

Ոստիկանության մի շարք ստորաբաժանումների ծառայողների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում սպանությունը բացահայտվել էր: Հիմնավորվել էր, որ այն կատարել է Երեւանի բնակիչ, 23-ամյա երիտասարդը:

Բերման ենթակվածը ներկայացվել է դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

14 տարի առաջ կատարված սպանությունը բացահայտվեց

Ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողները նախկինում կատարված առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկություններ էին ստացել: Խոսքը տասնչորս տարի առաջ կատարված սպանության մասին էր:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Էրեբունու բաժնի քրեական հետախույզները ձեռնարկեցին տարաբնույթ միջոցառումներ:

Մի քանի օր տեւած աշխատանքի արդյունքում տեղեկությունները հիմնավորվեցին, նաեւ նոր հանգամանքներ ի հայտ եկան:

Փաստական տվյալների համաձայն՝ 2005 թ. սեպտեմբերին Նոր Արեշի 11-րդ փողոցի տներից մեկում սպանվել էր 1937 թ. ծնված մի կին, որը ժամանակավոր բնակվում էր ազգականի տանը: Դեպքի օրը կինը եւ 1972 թ. ծնված ազգականը վիճել էին: Տղամարդը խեղդել էր ազգականուհուն: Հանցագործությունը թաքցնելու նպատակով էլ դին նկուղում թաղել էր:

Քրեական գործ հարուցվեց: Խուզարկվեց Նոր Արեշի 11-րդ փողոցի այն տունը, որտեղ կատարվել էր հանցագործությունը:

Օպերատիվ տեղեկությունները հաստատվեցին. նկուղում հայտնաբերվեցին մարդու ոսկորներ ու հագուստի մնացորդներ:

47-ամյա տղամարդը խոստովանական ցուցմունք է տվել ու կալանավորվել: Նշանակվել են փորձաքննություններ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:

«Բարեգործական» ապօրինություններ

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Շենգավիթ վարչական շրջանի նախկին ղեկավարը, առնչություն չունենալով եղբոր հիմնադրած «Շենգավիթ» բարեգործական հիմնադրամի հետ, 2012-2017 թթ. ընթացքում հիմնադրամին դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ պաշտոնական գրություններ է ուղարկել Շենգավիթում գործունեություն ծավալող իրավաբանական ու ֆիզիկական անձանց, ինչի արդյունքում հավաքագրվել է 25 միլիոն դրամ:

Պարզվել է նաեւ, որ հիշյալ բարեգործական հիմնադրամի տնօրենը, հափշտակություն կատարելու դիտավորությամբ, տարբեր ծրագրեր իրականացնելու պատրվակով աշխատակազմի որոշ պաշտոնատար անձանց կողմից հիմնադրամի դրամարկղից կանխիկ գումարներ ստանալու համար կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով, հիմնադրամի դրամարկղից ելքագրել ու յուրացման եղանակով հափշտակել է իրեն վստահված գումարները՝ այս պահին հայտնի տվյալներով՝ 3 միլիոն 318 հազար դրամ:

Քրեական գործ է հարուցվել:

Հակակոռուպցիոն ռազմավարություն

Կոռուպցիայի դեմ պայքարը աշխարհի բոլոր պետությունների իրավապահ մարմինների թիվ մեկ խնդիրն է: Այնուամենայնիվ, եթե իշխանություններն ու հասարակությունը կամք չդրսեւորեն ու չհամագործակցեն, պայքարը մատնված է անհաջողության:

Հոնկոնգը համարվում է աշխարհի ամենաքիչ կոռումպացված քաղաքներից: Հաշվի առնելով այն մեծ վնասը, որ բերում է կոռուպցիան եւ իշխանությունների անկարողությունը՝ դրա դեմ պայքարում, շատ երկրների համար Հոնկոնգի օրինակն ու փորձը ուսանելի են: Առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող այդ փորձը վկայում է, որ կարելի է ոչ միայն պայքարել կոռուպցիայի դեմ, այլեւ արմատախիլ անել:

էջ 5

Տարվա լավագույն օպերլիազորը

2018 թ. լավագույն օպերլիազորը, ոստիկանության բաժինն ու պետական պահպանության ծառայողը Գյումրիից են:

էջ 2

Անխուսափելի պատիժ

Բնակարանատիրոջը մատուցվել էր նախապես թունավորած գարեջուր, որը խմելուց հետո նա քնել էր:

էջ 2

Օրենքը՝ զորեղ հովանավոր

Պաշտոնավարման ընթացքում ապօրինի գործողությունները կասեցնելու փոխարեն կոծկեց, «օրենքի ուժ» տվեց:

էջ 3

Համակարգ

Տարվա լավագույն օպերլիազորը

2018 թվականի լավագույն օպերլիազոր է ճանաչվել ոստիկանության Մուշի բաժնի հետախուզության գծով ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ալեքսան Նորսոյանը:

Նկարահանման օրը նա բաժնում չէր: Պարզվեց՝ որպեսզի առաջ ոստիկանությունում ահազանգ էր ստացվել, որ Գյումրիի դպրոցներից մեկում պայթուցիկ սարք կա տեղադրված: Դեպքի վայր մեկնած ոստիկանության Մուշի բաժնի օպերատիվ խմբի կազմում էր նաեւ Ալեքսան Նորսոյանը:

Մինչ մենք եւս կհասնեինք դպրոց, աշակերտները եւ ուսուցչական կազմն արդեն էվակուացվել էին: Տեղում աշխատում էին տարբեր գերատեսչությունների ծառայողներ: Ավագ օպերլիազոր Ալեքսան Նորսոյանին եւ համայնքային ոստիկանության տեսուչին հանդիպեցինք դպրոցում:

Կասկածները հաստատվեցին՝ ահազանգը կեղծ էր: Երբ ամեն ինչ բացահայտված էր, զրուցեցինք լավագույն օպերլիազորի հետ. «Ծնվել եմ Նինոծմինդա քաղաքում: Դեռեւս դպրոցական տարիներին հոգեհարազատ էր ոստիկանության արտաքին ծառայությունը: Որոշեցի դպրոցն ավարտելուց հետո հասնեմ իմ նպատակին»:

1999 թվականին ընդունվեց ոստիկանության ակադեմիա: Հինգ տարի անց ծառայության նշանակվեց Գյումրիում: «Ծառայությունս սկսել եմ քրեական հետախուզության բաժանմունքում, հետո ծառայել եմ նույն բաժնի հետաքննության բաժանմունքում, ինչը նույնպես հետաքրքիր աշխատանք էր: Հետագայում նորից տեղափոխվեցի քրեական հետախուզություն՝ ավելի հոգեհարազատ ծառայության»:

Նուրջ քսան տարի ոստիկանի համազգեստը պատվով կրող Ալեքսան Նորսոյանն արժանացել է միայն խրախուսանքների, երկարամյա ծառայության ընթացքում չի ստացել տույժ կամ նկատողություն: Այս մասին նշեց նաեւ ոստիկանության Մուշի բաժնի պետի տեղակալ Մանուկ Գորգինյանը. «Ալեքսան Նորսոյանը ծառայության ընթացքում միշտ դրսեւորել է լավ վարքագիծ, բնութագրվում է որպես հմուտ ծառայող, ունի օպերատիվ աշխատանքի հարուստ փորձ, իր գիտելիքները սիրով փոխանցում է կրտսեր ծառայողներին, ունի մարդկային բարձր որակներ եւ կոլեկտիվում հարգված եւ սիրված է»:

Բացի քրեական հետախուզության բաժանմունքում ծառայությունից, կարեւոր է նաեւ ոստիկանության այլ ծառայությունների հետ համագործակցությունը, քանի որ այդկերպ կարելի է հասնել դրական արդյունքի: Սա մեզ հետ զրույցում հաստատեց բաժնի ավագ հետաքննիչ Վարդուհի Հայրապետյանը. «Ծառայելով հետաքննության բաժանմունքում՝ համագործակցում ենք քրեական հետախուզության բաժանմունքի հետ, իրականացնում ենք գործերի օբյեկտիվ, բազմակողմանի քննություն: Համագործակցում ենք նաեւ Ալեքսան Նորսոյանի հետ: Նրա հետ աշխատելը հաճելի է, քանի որ շատ գրագետ է, փորձառու եւ բանիմաց»:

Ալեքսան Նորսոյանը վայելում է անձնակազմի վստահությունն ու հարգանքը: Շատերի հետ, բացի գործընկեր լինելուց, նաեւ լավ ընկեր է, ինչը մեզ հետ զրույցում հաստատեց քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ Հովհաննես Մկրտչյանը. «Նորսոյանին ճանաչում եմ տասներեք տարի: Միասին սովորել ենք ոստիկանության ակադեմիայում, հետո ծառայության ենք անցել ոստիկանության նույն բաժնում: Ուրախ եմ, որ Ալեքսան Նորսոյանը իմ գործընկերն ու ընկերն է»:

2018 թվականի լավագույն օպերլիազորի մասին զրուցեցինք նաեւ ոստիկանության Մուշի բաժնի պետ Խորեն Բարխոյանի հետ: Նա ներկայացրեց նաեւ թվային տվյալներ. «2018 թվականին Ալեքսան Նորսոյանը հայտնաբերել է վեց տասնյակից ավելի հետախուզվողների: Բացի հետախուզական աշխատանքով զբաղվելուց, նաեւ մասնակցում է բաժնի բոլոր միջոցառումներին: Դարկ է նշել, որ բացահայտել է ծանր, առանձնապես ծանր եւ հասարակական հնչողություն ստացած հանցագործություններ»:

Մեկ տարում վեց տասնյակ հետախուզվող հայտնաբերած ոստիկանության մայոր Ալեքսան Նորսոյանը նշեց, որ լավագույնի կոչումը միայն իրենը չէ, լավագույնը ողջ ստորաբաժանումն է՝ իր թիմային աշխատանքով. «Մեր կոլեկտիվը միահամուռ կոլեկտիվ է: Ես շնորհակալ եմ իմ գործընկերներին. նաեւ նրանց բարեխիղճ աշխատանքի շնորհիվ արժանացա այս կոչմանը»,- նշեց լավագույն օպերլիազորը:

Գյումրին լավագույնների քաղաք է. 2018 թվականի լավագույն օպերլիազորը, ոստիկանության բաժինն ու պետական պահպանության ծառայողը հենց այս չքնաղ քաղաքից են:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Թաքցվել է 700 միլիոն դրամի շրջանառություն

Սկիզբը՝ էջ 1

Պարզվել է նաեւ, որ լիցենզիայի համար նախատեսված տարեկան պետտուրքի մասով պետությանը պատճառվել է դարձյալ առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 10 միլիոն դրամի վնաս:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է նաեւ, որ մարզադաշտի տնօրինությունը անհատ ձեռնարկատիրոջ հետ վարձակալության պայմանագիր է կնքել, որի հիման վրա անհատ ձեռնարկատերը նախորդ տարվա օգոստոսից մինչ օրս, առանց ֆինանսների նախարարության հատուկ թույլտվության, մարզադաշտի տարածքում փաստացի իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն՝ կազմակերպելով ծաղկի մեծածախ վաճառք: Այս դեպքում լիցենզիայի համար նախատեսված պետտուրքի մասով պետությանը պատճառվել է խոշոր չափերի 2 միլիոն դրամի վնաս:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն բերման են ենթարկվել անձինք, որոնցից վերցվել են բացատրություններ:

Դեպքերի առթիվ ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել, որն ուղարկվել է ՊԵԿ քննչական վարչություն: Օպերատիվ-հետախուզական միջոցառումները շարունակվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բացահայտում են Արաբկիրի ոստիկանները

Հոկտեմբերի 24-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, իրացնելով ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ ստացված օպերատիվ տվյալները, Ծենգավիթ վարչական շրջանից բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ, 54-ամյա մի տղամարդու: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց մեթամֆետամինի նմանվող զանգված: Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ հայտնաբերված զանգվածը տղամարդը բերել էր Իրանից:

Արաբկիրի քրեական հետախույզների տեղեկություններով՝ տղամարդը Իրանից այլ թմրամիջոցներ էլ էր բերել, որոնք պահում էր տանը: Նրա բնակարանի զննությամբ հայտնաբերվեցին հաշիշի եւ մարիխուանայի նմանվող զանգվածներ: Բացատրական աշխատանքի արդյունքում տղամարդը Արաբկիրի քրեական հետախույզներին ներկայացրեց նաեւ 60 գրամից ավելի ափոնի նմանվող զանգված:

Նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ:

Քննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Անխուսափելի պատիժ

Նախկինում կատարված հանցագործությունների բացահայտմամբ ոստիկանությունը վերստին ապացուցում է այն ճշմարտությունը, որ անպատժելիությունը միֆ է. հանցանքին միշտ հետամուտ է պատիժը, եթե նույնիսկ այն ինչ-ինչ հանգամանքներով հետաձգվում է: Արդարության վերականգնումը ոստիկանության թիվ մեկ գործառույթներից է՝ ժամանակային շրջանակներով չսահմանափակվող գործառույթ ու պարտականություն, ինչի իրագործումը ապացուցվեց հերթական անգամ:

Քսանմեկ տարի առաջ, հունվարի 26-ի ուշ երեկոյան, Գուրգեն Սիմոնյանը, նախապես համաձայնության գալով Արման Թորոսյանի, Արշակ Պողոսյանի եւ քրեական գործով չպարզված ոմն Արթուրի հետ, մտել էին Համլետ Ա.-ին պատկանող՝ Երեւանի Կոմիտասի պողոտայում գտնվող բնակարան՝ նպատակ ունենալով սպանել տանտիրոջն ու տիրանալ գույքին:

Բնակարանում ապագա տուժողին մատուցվել էր նախապես թունավորած գարեջուր, որը խմելուց հետո Համլետ Ա.-ն քնել էր: Մետաղալարով նրան խեղդամահ անելուց հետո եռյակը բնակարանից հափշտակել էր տարաբնույթ իրեր եւ դիմել փախուստի:

Փաստի առթիվ հարուցվել էր քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 8 եւ 11 կետերով եւ 185 հոդվածի 2-րդ մասով:

Գուրգեն Սիմոնյանին հայտնաբերել չհաջողվեց. հասցրել էր հեռանալ հանրապետությունից: Նրա նկատմամբ հայտարարվեց հետախուզում:

Հանցագործին հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումները շարունակվում էին: Ու հետախուզական միջոցառումների արդյունքում, հանցագործությունից երկու տասնամյակ անց Գուրգեն Սիմոնյանը կանգնեց քրեական պատասխանատվության ենթարկվելու փաստի առաջ:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով՝ ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով նույնականացման աշխատանքներ իրականացվեցին, եւ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության քրեական հետախուզության գլխավոր վարչության հետ համատեղ ձեռնարկված ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Գուրգեն Սիմոնյանը հայտնաբերվեց ՌԴ Կեմերովոյի մարզում: Ձերբակալվեց, իսկ ամիսներ անց ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ աշխատակիցների կողմից տեղափոխվեց Հայաստան:

Քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բռնվեց գողությունից դրպեներ անց



Հոկտեմբերի 22-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում ստացվեց, որ թիվ 30 երթուղու ավտոբուսում ուղեւորներից մեկի գրպանից գողացել են դրամապանակ, որի մեջ եղել է փող:

Գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկվեցին: Բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները, եւ համատեղ աշխատանքի շնորհիվ գրպանահատը հայտնաբերվեց:

Քրեական հետախույզները Բաղրամյան պողոտայից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկեցին Ամիրյան փողոցի 31-ամյա մի բնակչի:

Նա տվել է խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օրենքը՝ զորեղ հովանավոր

Քրեական օրենսգրքի 315² հոդվածը ՀՀ օրենսդրության վերջին լրացում-փոփոխություններից է: Այն պատիժ է նախատեսում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ինքնակամ զավթելու, ինչպես եւ շենքերի ու շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու համար:

Պաշտոնատար անձինք, որոնց վրա իրավական ակտերով դրված են այդ պարտավորությունները եւ որոնք դիտավորությամբ միջոցներ չեն ձեռնարկում ապօրինություններ իրականացնող անձանց նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ, պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով եւ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ մեկից երկու տարի ժամկետով ազատազրկմամբ եւ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից առավելագույնը երեք տարի ժամկետով զրկելով:

Սա օրենքի պահանջն է: Ներկայացվող պատմության «հերոսը», որին պայմանականորեն Սուրեն Հակոբյան կոչենք, օրենքի այս պահանջն է խախտել:

2015 թվականի մայիսից տեղական ինքնակառավարման մարմիններից մեկում Սուրեն Հակոբյանը զբաղեցրել է աշխատակազմի քարտուղարի պաշտոնը՝ համատեղության կարգով ժամանակավորապես՝ մինչեւ սեպտեմբեր ամիսը, կատարելով նաեւ շինարարության, տրանսպորտի եւ կոմունալ սպասարկման բաժնի պետի պարտականությունները: Նրա պարտականությունն էր կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական պահանջների պահպանման, ինքնակամ կառույցների, ապօրինի հողօգտագործման կասեցման ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ հսկողություն իրականացնել:

Ժամանակավոր՝ չորսամսյա պաշտոնավարման ընթացքում հասցրեց օգտվել պաշտոնի «ընձեռած» հնարավորություններից. ապօրինի գործողությունները կասեցնելու փոխարեն կոծկեց, «օրենքի ուժ» տվեց:

Մասնավորապես, վարչատարածքի բնակիչ Ստեփան Առաքելյանը, առանց շինարարության թույլտվության, առանց քաղաքաշինական ու իրավական փաստաթղթերի, համայնքային սեփականություն հանդիսացող տարածքից հող էր զավթել եւ շինություն կառուցել: Ապօրինության մասին քաղաքապետարանում գրություն էր ստացվել, որի ստուգումն ի պաշտոնե հանձնարարվել էր Սուրեն Հակոբյանին: Նա գրությունը ստանալու հաջորդ օրը գնացել էր նշված տարածք եւ հայտնաբերել, որ տեղեկությունը համապատասխանում է իրականությանը: Բայց Ստեփան Առաքելյանի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ չէր կիրառել: Ինչ խոսք, համապատասխան «վերաբերմունքի» դիմաց:

Սուրեն Հակոբյանի բախտը, սակայն, չբերեց. ջրի երես ելան ե՛ւ այս, ե՛ւ մյուս երկու անօրեն գործերը, ինչի համար էլ պատասխանատվության կենթարկվի:

Իսկ հիմա՝ որպես ամփոփում:

Անշուշտ, կբացառվեն նման երեւույթները, եթե քաղաքացիներն իրավագիտակցություն դրսեւորեն, անտարբեր չլինեն եւ ինչ-որ պաշտոնյայի ապօրինի արարքն ամբողջ կառույցին չվերագրեն կամ նրան անձեռնմխելի չհամարեն:

Զորեղ հովանավորը օրենքն է. ոչ մի անօրեն պատասխանատվությունից չի խուսափի, եթե նաեւ քաղաքացիները անտարբեր չլինեն ապօրինությունների հանդեպ ու դիմեն օրենքին:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բացահայտվեց իրավապահ կառույցների համագործակցությամբ

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Սյունիքի մարզային վարչության ու ենթակա բաժինների, նույն մարզի դատախազության, ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության ու քննչական կոմիտեի ծառայողների ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու քննչական գործողությունների շնորհիվ բացահայտվեցին թմրաշրջանառության դեպքեր:

Հոկտեմբերի 15-ին Մեղրիի մաքսակետում Երեւանի 64-ամյա բնակչի անձնական մաքսային զննման ժամանակ քաղաքացին հագուստի տակից ներկայացրեց մաքսանենգ ճանապարհով Հայաստան տեղափոխված մարիխուանա թմրամիջոցի նմանվող քսանմեկ փաթեթ, ափիոն եւ մեթամֆետամին թմրամիջոցների նմանվող մեկական փաթեթ՝ տարբեր քաշերով: Նշված զանգվածները առգրավվեցին, իսկ տղամարդը բերման ենթարկվեց ոստիկանության Մեղրիի բաժին ու ձերբակալվեց:

Շարունակելով օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ հոկտեմբերի 17-ին ոստիկանության Կապանի բաժնի ծառայողները, ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, ոստիկանություն բերման ենթարկեցին Կապանցի եւ քաջարանցի երկու տղամարդու՝ նրանցից մեկի վարած մեքենայով: Մեքենայի զննությամբ հայտնաբերվեցին ափիոնանման հեղուկով լցված ներարկիչներ եւ թմրամիջոցի պատրաստման եւ օգտագործման համար նախատեսված այլ պարագաներ:

Խուզարկություն կատարվեց բերման ենթարկված 53-ամյա կապանցու բնակարանում: Հայտնաբերվեցին դարչնագույն հեղուկով ներարկիչ, պոլիէթիլենային տոպրակով սպիտակ բյուրեղային զանգված, դարչնագույն պլաստիկանման զանգված ու դատարկ ներարկիչներ:

Բերման ենթարկված 45-ամյա քաջարանցու սրճարանում հայտնաբերվեց տոպրակի մեջ լցված սեւ զանգված եւ բժշկական սպիրտի ապակյա տարա՝ բամբակի խծուծով:

Նշված անձինք կալանավորվել են:

Կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Կրակել էր մեքենային

Հոկտեմբերի 23-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում ահազանգ է ստացվեց, որ Հալաբյան փողոցի շենքերից մեկի բակում կայանված մեքենան դիտավորությամբ վնասել են:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ 31-ամյա կնոջ «Մինի Կուպերի» ապակիներին կրակել են:

Տուժողից հաղորդում ընդունվեց: Սկսվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ կատարվածի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Հաղորդումից ժամեր անց Մաշտոցի բաժնի համայնքային ոստիկանները Աճառյան փողոցում հայտնաբերեցին ու կասկածանքով բերման ենթարկեցին մի երիտասարդի: Արագածոտնի մարզի բնակիչ, 26-ամյա երիտասարդը խոստովանական բացատրություն տվեց: Հետագա միջոցառումներով Մաշտոցի ոստիկանները հայտնաբերեցին նաեւ ատրճանակը:

Դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Մեքենայից թմրամիջոց հայտնաբերվեց

Հոկտեմբերի 11-ին ոստիկանության Հրազդանի բաժնի քրեական հետախույզները, համագործակցելով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության աշխատակիցների հետ, թմրամիջոց ապօրինի պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բաժին բերման են ենթարկել երեւանցի մի տղամարդու՝ նրա վարած «Օպել» մեքենայով հանդերձ:

Բաժնում տղամարդը հայտնել է, որ ավտոմեքենայում իր անձնական օգտագործման համար թմրամիջոց է պահում: Հարուցված քրեական գործի շրջանակում, դատարանի որոշմամբ, խուզարկվել է նրա մեքենան, որի սրահից հայտնաբերվել են թմրամիջոցի նմանվող զանգվածով թղթե չորս փաթեթ եւ մոխրացած հետքերով կաթոցիչի նմանվող առարկա:

Նախաքննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

www.police.am

Բռնվեց հանցանքի վայրում

Ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ ստացան, որ արտաշատցի 37-ամյա մի տղամարդ հոկտեմբերի 28-ին Վերին Դվին գյուղում բնակարանային գողություն է կատարելու: Թիրախ ընտրված տան բնակիչները այդ օրը հարսանեկան արարողության էին մասնակցելու, տանը մարդ չէր լինելու:

Հոկտեմբերի 28-ին, ժամը 17.30-ին, տղամարդը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացեց տան պատուհանը, մտավ ներս, սակայն հանցագործությունն ավարտին չհասցրեց: Քրեական հետախույզները նրան բերման ենթարկեցին բաժին:

Քրեական գործ է հարուցվել:

Հազար դոլար գողոնը հայտնաբերվեց

Հոկտեմբերի 28-ին ոստիկանության Աշտարակի բաժնում մի կին հաղորդում էր տվել, որ մոտ մեկ ժամ առաջ Աշտարակի մի խանութի տարածքում իր պայուսակից գողացել են հազար դոլար:

Աշտարակի ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է Աշտարակի բնակիչ, 43-ամյա մի կին: Նա բերման է ենթարկվել բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Գողոնը հայտնաբերվել է:

81-ամյա կնոջը կողոպտողը հայտնաբերվեց

Հոկտեմբերի 28-ին, ժամը 20.55-ին, ոստիկանություն զանգած 81-ամյա կինը հայտնել էր, որ իրենց շենքի բակում անհայտ անձը հափշտակել է դրամապանակը, որի մեջ եղել են բջջային հեռախոսներ ու փող:

Ժամը 22.10-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի ծառայողները, կողոպուտ կատարելու կասկածանքով, բաժին բերման են ենթարկել Հաղթանակի 2-րդ փողոցի բնակիչ, 34-ամյա մի տղամարդու:

Նախապատրաստվում են նյութեր:

Անձի առեւանգում ու ծեծ

Հոկտեմբերի 26-ին մեծամորցի մի երիտասարդ ոստիկանության Մեծամորի բաժնում հաղորդում է տվել, որ ժամուկես առաջ ծանոթը՝ ընկերների հետ, իրեն տնից դուրս է կանչել՝ իր «Մերսեդեսը» գնելու պատրվակով: Վարպետի մոտ գնալու ճանապարհին ծանոթի հետ եկած անձանցից մեկը բռունցքով խփել է իր աչքին, այնուհետեւ ստիպողաբար իրեն դուրս են բերել մեքենայից, նստեցրել ուրիշ մեքենա եւ տարել Հուշակերտ գյուղի դաշտեր: Ճանապարհին նրանց միացած այլ անծանոթ անձանց հետ ծեծել են իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Մեծամորի բաժնի եւ Դավիթաշենի բաժանմունքի ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է ծանոթի ինքնությունը՝ Մեծամորի բնակիչ, 38-ամյա մի տղամարդ: Պարզվել է նաեւ ծեծի ենթարկած երկուսի ինքնությունը. Շենավան գյուղից՝ 39 եւ 43 տարեկան եղբայրներ:

Եղբայրները բերման են ենթարկվել Մեծամորի բաժին եւ տվել բացատրություններ:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Ներընտանեկան»

Շիրակի մարզի Փանիկ գյուղում ապրող ամուսինները՝ Սվետլանան եւ Պետրոսը, վերջին տարիներին լարված հարաբերություններ ունեին: Պատճառը Պետրոսի հարբեցողությունն էր: Աշխատանքից հետո տուն էր վերադառնում հարբած: Սվետլանան ջանք չէր խնայում ամուսնուն հետ պահելու անցանկալի նախասիրությունից: Ջանգում էր նրան, վիրավորական հաղորդագրություններ էր ուղարկում, ինչը Պետրոսին զայրացնում էր: Իսկ երբ հարբած տուն էր վերադառնում, վեճն անխուսափելի էր:

Սեպտեմբերի կեսերն էր. Պետրոսը Երեւանում բանվորական աշխատանքներ էր անում, երբ կինը

վիրավորական հաղորդագրություն ուղարկեց, սաստելով, որ չխմի: Այնինչ աշխատանքը ավարտելուն պես Պետրոսը հակառակն արեց: Այդպես խմած ու բարկացած էլ ուղեւորվեց Փանիկ: Տուն մտնելուն պես սկսեց վիճել կնոջ հետ: Նա էլ տեսնելով, որ Պետրոսը դարձյալ խմած է, վիրավորանքը քառապատկեց: Պետրոսն էլ ձեռքերով, ոտքերով ու գլխով խփեց կնոջը: Դարվածները դիպուկ էին եւ ցավոտ: Սվետլանան դիմեց բուժօգնության:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն: Պետրոս Ապրեսյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 117 հոդվածով նախատեսված հանցարարք:

Կատարվում է քննություն:

«Գասախրակչական»

Վարդենիկ գյուղի բնակիչ Անդրանիկ Հարությունյանը կոնֆլիկտներ չէր սիրում: Սակայն ամիսներ առաջ պատահեց այն, ինչ պատահեց: Համագյուղացի Վարդանի փասներկուամյա որդուն դիտողություն արեց: Անչափահասը՝ Արմենը, գյուղամիջում խաղում էր: Սակայն քիչ անց խաղը թողած՝ սկսեց ծաղրել Անդրանիկին, որը փորձեց սաստել Արմենին: Դիտողություն արեց, սակայն Արմենը նույն ոգով շարունակեց: Անդրանիկն էլ վրդովված ասաց.

- Գնա այստեղից, թե չէ ծեծ կուտես:

Արմենը Անդրանիկի վերջին խոսքից կարծես վախեցավ: Ջանգեց հորը ու լացակումած տեղեկացրեց այդ մասին: Հայրը զայրացած շտապեց գյուղամեջ: Անդրանիկի հետ հանդիպումը չանցավ բարեկամական մթնոլորտում: Վարդանը ձեռքերով խփեց նրա դեմքին ու գլխին:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Մարտունու բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Կողմերը բացատրություններ տվեցին, նշանակվեց նաեւ դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Անդրանիկին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Դիմողը, սակայն, բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Դեռահասության տարիքի բնութագիրը

Դեռահասության տարիքային շրջանը գրականության մեջ տարբեր անվանումներ ունի՝ դեռահասություն, անցումային, պուբերտանտային շրջան, սեռական հասունացման տարիքի բացասական փուլ, պորտալարի երկրորդ կտրման տարիք եւ այլն: Անվանումներն արտացոլում են դեռահասի տարիքային առանձնահատկությունները, երբ անցում է կատարվում մանկությունից հասունություն:

Տվյալ շրջանի տարիքային շրջանակներն ընդգրկում են 16-19 տարիքային սահմանը, չնայած որոշ հեղինակներ պնդում են, որ այն ձգվում է մինչեւ 16-17 տարեկանը: Եվրոպական երկրներում դեռահասության տարիքն ընդգրկում է 16-21 տարեկանն ընկած ժամանակահատվածը: Այս տարիքին բնորոշ են նաեւ մի շարք կենսաբանական գործոնների փոփոխություններ. կատարվում է սեռական հասունացում՝ հասակի անսպասելի արագ ավելացում, երկրորդային սեռական հատկանիշների ձեւավորում: Այս գործընթացն աղջիկների մեջ սկսվում է մոտավորապես երկու տարի ավելի շուտ եւ շարունակվում համեմատաբար ավելի կարճ ժամանակահատվածում (3-4 տարի), քան՝ տղաների (4-5 տարի): Այս տարիքը համարվում է սեռական վարքի վառ դրսեւորման շրջան, քանի որ տեղի է ունենում սեռական էներգիայի եւ սեռական ցանկությունների աճ:

Հոգեբանների համար առավել հետաքրքիր են դեռահասության շրջանում կատարվող հոգեկան փոփոխությունները: Բավական մեծ փոփոխություններ են կատարվում դեռահասի հետաքրքրությունների համակարգում: Մի կողմից կորչում է հետաքրքրությունը այն իրերի եւ երեւույթների նկատմամբ, որոնք նրան հետաքրքրում էին նախկինում, մյուս կողմից՝ ծագում են նոր հետաքրքրություններ, հիմնականում՝ էրոտիկ բովանդակությամբ, սուր սեքսուալ հետաքրքրություններ: Հնարավոր է, որ

դեռահասը իրեն այնպես դրսեւորի, որ թվա՝ նրա մեջ լրիվ բացակայում է ինչ-որ բանի հանդեպ հետաքրքրությունը:

Դեռահասության տարիքի կարեւորագույն խնդիրներից է ինքնագիտակցության եւ նույնականության ձեւավորումը: Ընդ որում, աղջիկների ինքնագիտակցությունը ավելի շուտ է ձեւավորվում, քան տղաներինը: Աղջիկները բնորոշվում են միայնության զգացումի վաղ արտահայտվածությամբ: Ֆիլիպսի հետազոտությունները ցույց տվեցին, որ աղջիկների իրական եւ իդեալական «ես»-երը միավորվում են, իսկ տղաներինը՝ հակադրվում: Սակայն տղաները եւ աղջիկները միանման են ընկալում սեռային տարբերությունները: Ընդ որում, կանանց դերը գնահատվում է ավելի ցածր: Տղաները կնոջը առավել վերագրում են ընտանեկան կյանքը կազմակերպողի դերը, իսկ տղամարդուն՝ կնոջ օգնականի դերը:

Դեռահասության շրջանում ձեւավորվում են նաեւ մի շարք նորագոյացություններ՝

Սեփական «ես-ի» բացահայտում

«Մենք» կոնցեպցիայի ձեւավորումը, որը երեբեմն ծայրահեղական բնույթ է կրում. «Մենք յուրայիններ ենք, նրանք՝ օտարներ»:

Ռեֆերենտային խմբերի ձեւավորում

Դեռահասը հակված է ռեֆերենտային խմբի կարծիքներն ու արժեքներն ընդունել որպես իր սեփականը: Նրանց գիտակցության մեջ դրանք ընդդիմանում են մեծահասակներին: Խմբի առաջնորդին եւ նրա ընդհանուր կարծիքին վերաբերվում են ոչ քննադատաբար:

Հասունության ձեւավորում

Իհարկե, դեռահասը չի հասնում օբյեկտիվ հասունության:

Դեռահասությունը բնորոշվում է նաեւ ինտելեկտուալ հնարավորությունների եւ հաջողությունների միջեւ անհամապատասխանության առկայությամբ, քանզի հնարավորությունները մեծ են, իսկ հաջողությունները՝ քիչ: Առաջանում է ներքին ապրումների եւ հուզականության բուռն շրջան: Հնարավոր է տիպիկ դպրոցական ֆոբիաների առաջացում, որոնք կորչում են 10-13 տարեկանում եւ դրսեւորվում դեռահասության շրջանում: Նրանք դառնում են ավելի ամոթխած եւ մեծ նշանակություն են տալիս սեփական արտաքինի եւ վարքի թերություններին: Նոր ֆիզիկական «ես»-ի ձեռքբերման հետ կապված՝ դեռահասները դառնում են ավելի տագնապային, հաճախ չեն ցանկանում տնից դուրս գալ, ընդգրկվել սոցիալական խմբերում. վախենում են ծիծաղելի թվալ:

Մյուս կարեւորագույն ասպեկտը դեռահասների երեւակայությունն է՝ կապված նոր պահանջմունքների, մասնավորապես՝ սիրային իդեալի ստեղծման հետ: Նրանք սկսում են օրագրեր պահել, բանաստեղծություններ գրել: Ստեղծագործ ակտիվացում է նկատվում նույնիսկ պասիվների մոտ: Այստեղ երեւակայության ակտիվացումը հանդես է գալիս որպես սուբյեկտիվ գործոն, որն ապահովում է հուզական ոլորտի ներքին բավարարվածություն: Դեռահասին բնորոշ է նաեւ սեփական ֆանտազիաները թաքցնելը, որոնք հաճախ վերաբերում են նրա ինտիմ ոլորտին:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Ահավոր բարձրախոս հայրը

16-ամյա մի աղջիկ զանգել է ոստիկանություն եւ հայտնել, թե հայրը հարբած վիճակում նստել է տան դիմաց եւ ահավոր բարձր խոսում է:

Մեկնած ոստիկանները պարզել են նաեւ, որ վեճ ու հայհոյանքներից զատ՝ խմած հայրը ձեռքով խփել է դստեր գլխին՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Դուստրը, սակայն, հրաժարվել է հաղորդում տալուց:

Անկոչ վարսավիրը

33-ամյա Օֆելյան հաղորդում է տվել, որ ժամը 10-ի սահմաններում 37-ամյա Վարդուհին ներխուժել է իրենց բնակարան, ձեռքով հարվածներ հասցրել՝ պարանոցի եւ դեմքի շրջանում պատճառելով վնասվածքներ, վերջում էլ մկրատով կտրել իր մազերից մի փունջ:

Ձեռնարկվում են միջոցառումներ «վարսավիր» կնոջը հայտնաբերելու ուղղությամբ:

Քարկոծում եւ համբույր

Պաշտոնապես գրանցված 34-ամյա մի համասեռամոլ հաղորդում է տվել, որ օրեր առաջ իրենց սիրելի խաչմերուկում ծագած վիճաբանության ժամանակ անհայտ անձը քաշել է իր կեղծամից, ոտքով խփել մեջքին եւ քար նետել իր ուղղությամբ՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

«Նույնաբովանդակ» մի անձ էլ զանգել է ոստիկանություն եւ հայտնել, թե գիշերվա չորսին իրեն անծանոթ օտարազգի երեք տրանսվիստիներից մեկը, օգտվելով իր անուշադրությունից, համբուրելու ընթացքում գրպանից գողացել է 220 հազար դրամ:

Ոստիկանության ծառայողները, գողությունը կատարելու կասկածանքով, որոպեներ անց փողոցից բերման են ենթարկել կուբացի չորս երիտասարդի:

Մնում է պարզել դավադիր համբույրի հեղինակին:

Երկաթե նժույգի հաղթանակը

«Օպել Զաֆիրա» մակնիշի մեքենան միջհամայնքային ճանապարհին բախվել է ձիու, ինչի հետեւանքով 55-ամյա ձիավորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց, իսկ ձին՝ երեւի սպանդանոց:

Յուրահատուկ ինքնասպանություն

Մի երիտասարդ զանգել եւ հայտնել է, թե 50-ամյա հայրն ալկոհոլի ազդեցության տակ տունն այրում է:

Քրեական հետախույզները պարզել են, որ հայրը ալկոհոլի ազդեցության տակ, մոր մահվան փաստը հիշելով, կոշիկները լցրել է կաթսայի մեջ եւ այրել, որպեսզի առաջացած ծխով ինքնասպան լինի:

Երբ ընկերը դառնում է նախկին

Ոստիկանություն է զանգել 43-ամյա մի կին եւ հայտնել, որ օդանավակայանում հարձակվել են իր վրա, խփել, դեմքն էլ կարմրած է:

Մեկնած ոստիկաններին կինը հավելել է, որ օդանավակայանի ժամանման սրահի մուտքի դիմաց 38-ամյա նախկին ընկերն է բռնել պարանոցից, քաշել-տարել անվճար ավտոկայանատեղի, նստեցրել իր «Օպելը», հայհոյել, խփել ականջին, գլխին, դեմքին, այնուհետեւ մազերից քաշելով դուրս է հանել մեքենայից ու հեռացել:

Ոստիկաններին մնում է պարզել, թե հատկապես ո՞ր պահից ընկերը դարձավ նախկին:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 24-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 35 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի, 1-ը՝ կողոպուտի, 1-ը՝ կողոպուտի փորձի, 1-ը՝ կողոպուտի փորձի եւ սուտ մատնության, 2-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության, կաշառքի միջնորդության, պաշտոնեական կեղծիքի եւ սուտ մատնության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 113 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 149-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 34 դեպք. 3 մարդ զոհվել է, 34-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հոկտեմբերի 27-ին Երեւանի Գ.Նժդեհի փողոցում իրար են բախվել «Օպել», «ԲՄՎ», «Հունդաի» եւ «Աուդի» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 28-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Աբովյան փողոցում վրաերթի է ենթարկել 66-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 28-ին Երեւանի Ազատության պողոտայում իրար են բախվել «Ռենո» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Ռենո»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 28-ին Արարատի մարզի Դաշտավան գյուղում իրար են բախվել «Նիսան» մակնիշի 2 ավտոմեքենա. 46-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 28-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 54-րդ կմ-ին իրար են բախվել «Մերսեդես» մակնիշի 2 ավտոմեքենա. վարորդներն ու 3 ուղեւոր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 28-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի 27-ամյա վարորդը Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում վրաերթի է ենթարկել մի քաղաքացու, որը տեղում մահացել է:

■

Հոկտեմբերի 29-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Մեղրի քաղաքի Ադելյան փողոցում վրաերթի է ենթարկել 16-ամյա պատանու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 29-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Նալբանդյան փողոցում վրաերթի է ենթարկել 46-ամյա քաղաքացուհու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 29-ին Երեւանի Շիրազի փողոցում իրար են բախվել «ՎԱԶ-210703», «Օպել» եւ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենաներ: «ՎԱԶ-2106»-ի վարորդը եւ 2 ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 29-ին «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Կուրղինյան փողոցում վրաերթի է ենթարկել 64-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 29-ին Երեւանի Սարկավագի փողոցում «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 81-ամյա կնոջ եւ 13-ամյա աղջկա, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 29-ին Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենաներ: «Մերսեդես»-ի ուղեւորը մարմնական վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 30-ին «Շկոդա» մակնիշի ավտոմեքենան Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոցում դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ հայտնվել դաշտամիջյան հատվածում. 29-ամյա վարորդը մարմնական վնասվածքով դիմել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 30-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Սեւան-Երեւան ճանապարհի 11-րդ կմ-ին վրաերթի է ենթարկել 68-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 29-ին «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենան Աշտարակ-Եղվարդ ճանապարհի 9-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի հատվածից եւ կողաշրջվել. վարորդը եւ 2 ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Հակակոռուպցիոն ռազմավարություն

Հոնկոնգի փորձը

Սկիզբը՝ էջ 1

Կոռուպցիայի դեմ պայքարը Հոնկոնգում սկսվեց միանգամից մի քանի ոլորտներում՝ կրթության, բժշկության, ոստիկանության գործունեության: Անցած դարի յոթանասունական թվականներին Հոնկոնգը դասվում էր ամենակոռումպացված քաղաքների շարքին: Նշված ոլորտների աշխատակիցներն ստեղծել էին իրենց ներքին համակարգը՝ կոռուպցիայի միջոցով շահույթ ապահովելու նպատակով: Օրինակ, կրթական ոլորտում աշխատանքի տեղավորելու, այս կամ այն գործը «գլուխ բերելու» համար սահմանված հստակ գնացուցակ կար: Նույնը բժշկության ոլորտում էր: Պետական ցանկացած կառույցում առանց կաշառքի ոչինչ չէր արվում: Հոնկոնգի ոստիկանության համակարգը եւս զերծ չէր դրանից:

Հոնկոնգում այնպես հստակ էր գործում կոռուպցիոն համակարգը, որ թվում էր՝ ոչինչ այն վերացնել չի կարող: Ոլորտների շարքային աշխատողները հավաքում էին փողերը եւ փոխանցում միջին օղակին, որտեղից էլ գումարներն անցնում էին բարձր ղեկավարությանը, որոնք «չէին նկատում» ինչ է կատարվում ներքին օղակներում: Այսինքն՝ գործում էր ցանցային կոռուպցիա. տուժում էր ե՛ւ գործարարը, ե՛ւ մանր ու միջին առեւտրականը, արտադրողն ու ներկրողը, հասարակությունը: Չնայած այս ամենին՝ վերին ղեկավարությունը խիստ քննադատության էր ենթարկում կոռուպցիան որպես իշխանության հիմքերը խարխլող երեւույթ: Ուշագրավ է, որ քննադատության էր ենթարկվում անհատ կաշառակերը, որը գործում էր ինքնուրույն, երբ պետք է մտներ «ընդհանուրի շարքերը»:

Մի խոսքով՝ կոռուպցիան ամենազարգացած համակարգն էր բոլոր ոլորտներում: Չնայած քաղաքի իշխանությունների ձեռնարկած միջոցառումներին՝ կոռուպցիան շարունակում էր ծաղկել: Դա վկայում էր, որ նրա դեմ սովորական մեթոդներով պայքարելն անհեռանկար է:

Քաղաքում կոռուպցիան արմատախիլ անելու համար նշանակվեց նոր գեներալ-նահանգապետ, որը կտրուկ միջոցներ ձեռնարկեց եւ հասավ շոշափելի արդյունքների: Նախ ստեղծվեց կոռուպցիայի դեմ պայքարի Անկախ հանձնաժողով, որը համակարգում էր երեւույթի վերաբերյալ բոլոր հետաքննական գործընթացները, կանխարգելիչ միջոցառումները եւ դրանցում հասարակության ակտիվ ներգրավումը: Հանձնաժողովը ենթարկվում էր Հոնկոնգի նահանգապետին եւ ուներ լայն իրավունքներ:

Հանձնաժողովն ուներ իր բյուջեն եւ լավագույն մասնագետներ ներգրավելու հնարավորություն: Խոսքը ոչ միայն քննիչների, հետաքննիչների, այլեւ հաշվապահների, տնտեսագետների, կառավարման փորձագետների, վերլուծաբանների, իրավաբանների եւ այլ մասնագետների մասին է:

Հանձնաժողովը կազմված էր երեք դեպարտամենտից՝ օպերատիվ, հետաքննական, կանխարգելիչ, որոնք ուսումնասիրում էին պետական եւ մասնավոր կազմակերպությունների հակվածությունը կոռուպցիային, տալիս գնահատականներ եւ օգնում ձեռնարկել համապատասխան քայլեր: Հասարակության հետ կապերի դեպարտամենտի խնդիրը Հոնկոնգի բնակչության ներգրավումն էր կոռուպցիայի դեմ պայքարում:

Արդյունքում՝ Անկախ հանձնաժողովը կարողացավ ստեղծել այնպիսի իրավիճակ, որ կոռուպցիայի դեմ պայքարը ստացավ թափանցիկություն եւ հասարակական հնչողություն, ինչի շնորհիվ քաղաքացիների մի ստվար հատված իր աջակցությունը բերեց ընդհանուր գործին: Հանձնաժողովն ունենալով գործարարների, շարքային քաղաքացիների, հասարակության ակտիվ աջակցությունը՝ կարողացավ վերջակետ դնել համակարգված կոռուպցիային եւ նվազագույնի հասցնել կոռումպացվածությունը պետական տարբեր ոլորտներում:

Այն պահանջեց մեծ ջանքեր, նպատակասլացություն, համբերություն ինչպես իշխանության, այնպես էլ հասարակության կողմից: Ահա Հոնկոնգի իշխանությունների ձեռնարկած հակակոռուպցիոն մի քանի հիմնական միջոցներ, որոնք ապահովեցին հաջողությունն այդ պայքարում:

Երբ հասարակությունը դեմ հանդիման է կանգնում համակարգված կոռուպցիային, պետք է ընդունել, որ սովորական միջոցներով հնարավոր չէ պայքարել դրա դեմ: Հարկավոր է ստեղծել այնպիսի համակարգ, որը պետք է գնահատի կոռուպցիան ոչ թե որպես անհատական, այլ՝ համակարգային երեւույթ:

Հակակոռուպցիոն ռազմավարությունը պետք է նպատակաուղղված լինի իշխանության մոնոպոլիայի վերացմանը, պետք է սահմանափակվեն եւ հստակ սահմանվեն իրավունքները, ուժեղացվեն հաշվետվությունը եւ հսկողությունը, բարձրացվի թափանցիկությունը եւ, միեւնույն ժամանակ, վերահսկվեն բոլոր ելքերը՝ կապված իրացումների հետ:

Հենց այս մեթոդներն էլ հանձնաժողովը դարձրեց իր գլխավոր գործիքը հակակոռուպցիոն պայքարում:

Պետք է լինի այնպիսի կառույց, որը ենթարկվում է միայն իշխանության ամենաբարձր ղեկավարին եւ օժտված է լայն իրավունքներով: Այն անհրաժեշտ է համալրել բարձրակարգ, արհեստավարժ մասնագետներով, որոնք կկարողանան ստեղծել ուժեղ հսկողական համակարգ: Եվ ամենակարեւորը. հանձնաժողովի անդամները պետք է հասարակության մեջ վստահություն վայելեն եւ արատավորված չլինեն:

Անհրաժեշտ է կատարել կոռուպցիայի տարբեր տեսակների վերլուծություն, հատկապես նրանց, որոնք առավել վնասաբեր ու տարածված են: Այդպիսի վերլուծությունը թույլ է տալիս իրագործել սովորական, բայց ազդեցիկ մի կանոն, որը հասարակությանը նկատելի է դարձնում պայքարի առաջին պտուղները: Դա նշանակում է՝ ընտրել կոռուպցիայի այն տեսակը, որտեղ կարճ ժամանակամիջոցում կարելի է հասնել արդյունքի՝ առանց ծավալուն միջոցառումների: Հանրային աջակցություն ապահովելու համար հարկավոր է սկսել կոռուպցիայի այն տեսակներից, որոնք տեսանելի են հասարակությանը եւ անհետաձգելի միջամտություն են պահանջում:

Շատ կարեւոր է դաշնակիցներ գտնել եւ այդ պայքարում ընդգրկել հասարակության բոլոր շերտերի ներկայացուցիչներին:

Փորձը ցույց է տվել, որ իշխանությունը միայնակ ի վիճակի չէ պայքարել կոռուպցիայի դեմ: Անհրաժեշտ է հանրային պայքար: Դաշնակիցների դերում կարող է հանդես գալ տնտեսության մասնավոր հատվածը, քաղաքացիական հասարակությունը: Անհետաձգելի այս պայքարին կարող են իրենց ներդրումը բերել քաղաքացիական առաջնորդները, հասարակական կազմակերպությունները, ուսանողները, գործարարները, բոլոր նրանք, ովքեր դժգոհ են կաշառակերությունից եւ շորթումից:

Պետք է կոտրել անպատժելիության կարծրատիպը, որը հասարակությանը վարակում է անկարողության եւ թուլության զգացողությամբ: Հասարակությունը հաճախ կորցնում է հույսը կոռուպցիայի դեմ պայքարում: Անհրաժեշտ է հերքել անպատժելիության գաղափարը:

Ոչինչ հասարակության վստահությունն այնպես չի սպանում, ինչպես համոզվածությունը, որ հակակոռուպցիոն պայքարն ուղղված է միայն «մանր ձկների» դեմ: Փորձը վկայում է, որ կոռուպցիոն պայքարը կհաղթանակի այն դեպքում, եթե կարողանան բռնել «խոշոր ձկներին»: Խոշոր կոռումպացված անձանց անհրաժեշտ է հայտնաբերել եւ պատժել ոչ միայն որպես կաշառակերների, այլեւ հասարակության հավատը վերականգնելու համար: Անկախ հանձնաժողովի նկատմամբ հավատը հաստատվեց միայն այն ժամանակ, երբ ազատազրկման դատապարտվեցին բարձրաստիճան չինովնիկներ: Պաշտոնյաների ձերբակալությունը հասարակության համար իսկական ազդանշան էր, որ, իրոք, խաղի կանոնները փոխվել են:

Հարկավոր են այնպիսի միջոցառումներ, որոնք կոռուպցիայի դեմ պայքարն անընդհատ կպահեն ուշադրության կենտրոնում: Անհրաժեշտ է հասարակությանը պարբերաբար իրազեկել բացահայտումների, դատավարությունների մասին: Շարքային քաղաքացին պետք է հասկանա, որ կոռուպցիայի վերացումը առաջին հերթին բխում է իր շահերից:

Հակակոռուպցիոն մարտավարությունը պահանջում է վերլուծել ընդունված կոռուպցիոն ձեւերը եւ դրանց վերացման ուղղությամբ սահմանել նոր կանոններ: Երբեմն ընդունված բազմաթիվ օրենքներն են հանդիսանում կոռուպցիայի հիմքը: Նոր օրենքներ ու կանոններ անհրաժեշտ են այն դեպքում, եթե դրանք փոխում են ազդակներն ու խթանները, նվազեցնում իշխանության մոնոպոլիան, բացառում կամ սահմանափակում են իրավունքները, ուժեղացնում տեղեկատվական հոսքը:

Համակարգված կոռուպցիայի գոյության պայմաններում պայքարի ոչ մի գործողություն նշանակություն չի ունենա, եթե չփոխվի տեղեկատվական միջավայրը: Դրան հասնելու լավագույն միջոցը բնակչության եւ իշխանության միջեւ կապի պահպանումն է: Անհրաժեշտ է լայնորեն օգտագործել ԶԼՄ-ների գործոնը: Լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում պետք է լինի Անկախ հանձնաժողովի աշխատանքը:

Հակակոռուպցիոն պայքարի կարեւորագույն պայմանն այն է, որ երկրի ողջ բնակչությունը, շարքային քաղաքացուց մինչեւ իշխանության գլուխ կանգած ղեկավարները, դրսեւորեն քաղաքական կամք այդ անզիջում պայքարում:

Որքան էլ իշխանությունը միջոցներ ու ջանք ներդնի կոռուպցիայի դեմ պայքարում, եթե ժողովուրդը չհավատա եւ օգնության ձեռք չմեկնի, եւ հակառակը, եթե հասարակությունն ամեն ինչ անի, իսկ իշխանությունները կամք չդրսեւորեն ու չաջակցեն, պայքարը կոռուպցիա կոչվող սոցիալական հիվանդության դեմ դատապարտված է անհաջողության:

Հարգել ոստիկանին ու ենթարկվել օրենքին

«Մոնակո» թերթի լրագրողի հարցազրույցը Մոնակոյի պետական խորհրդական, ներքին գործերի նախարար Պոլ Մասերոնի հետ:

- Հարգելի՛ պարոն նախարար, Մոնակոյի իշխանապետությունը համարվում է աշխարհի ամենաապահով վայրերից մեկը: Մի՞շտ է այդպես եղել, թե՞ 20-րդ դարի վերջ - 21-րդ դարի սկզբների ոստիկանության աշխատանքի արդյունք է:

- Անվտանգության հարցը Մոնակոյի համար մշտապես եղել է առաջնային: Անվտանգությանը հատկացվել է առանձնահատուկ ուշադրություն, իսկ ոստիկանությունն ամեն ինչ արել է, որ օրինապահությունն ու օրինահարգությունը լինեն առաջին տեղում: Մոտ հարյուր տարի առաջ՝ 1914 թվականին, իշխան Ալբերը, որ համարվում է աշխարհի քրեագետների համախմբման կազմակերպության հիմնադիրը, դարձավ քրեագետների առաջին հանդիպման նախաձեռնողը: Նա հիմնադրեց մի կառույց, որը հետագայում դարձավ ներկայիս Ինտերպոլի հիմքը:

- Բայց հետաքրքիր են այն գործոնները, որոնց շնորհիվ Մոնակոն այդպիսին է:

- Անկեղծ ասած՝ գոյություն ունի չորս մոտեցում: Իշխան Ալբեր 2-րդը հստակ դրել է իր պահանջները, եւ անգամ փոքր շեղումը չի ընդունվում: Իսկ ոստիկանության պահանջն է՝ պահպանել ձեռք բերածը եւ չբավարարվել այդքանով:

Երկրորդը, որը շատ կարեւոր է երկրի իշխանության համար, լավ պատրաստված, գերազանց հանդերձավորված, քաղաքացու կողմից հարգված եւ մոտիվացված ոստիկանությունն է: Կարելի է ասել, որ Մոնակոն ոստիկանական պետություն է, քանի որ երկու քառակուսի կիլոմետր տարածքի վրա ծառայություն են իրականացնում մոտ հազար ոստիկան: Սա համաշխարհային ռեկորդ է՝ օրինականության պահպանման ծառայողների թվաքանակի հետ կապված: Ուղղակի չպետք է մոռանալ, որ մեր երկրում անցկացվում են բազմաթիվ մարզական եւ մշակութային միջոցառումներ, որոնց մասնակցում են հարյուր հազարավոր զբոսաշրջիկներ. օրինակ՝ «Ֆորմուլա-1»-ի ժամանակ մենք հազարավոր զբոսաշրջիկներ ենք ընդունում:

Մեր ոստիկանները գերազանց պատրաստված են, ունենք Ոստիկանական ակադեմիա, որտեղ մեր կադրերը հիմնավոր վերապատրաստում են անցնում: Դրա հիմնական նպատակն է՝ պատրաստել արհեստավարժ ոստիկաններ, որոնք գերազանց կկատարեն իրենց ծառայողական պարտականությունները: Մեր ոստիկանությունը հիանալի հանդերձավորված է, զինված է ամենաժամանակակից եւ լավագույն տեխնիկական սարքավորումներով: Օրինակ, Մոնակոյում գտնվում է 568 տեսախցիկ, ոստիկանության դեպարտամենտում կան մոնիթորներ, որոնց առաջ 365 օր քսանչորսժամյա հերթապահություն են իրականացնում ոստիկանության սպաները, որոնք մշտապես հսկողության տակ են պահում տեսախցիկների տեսաձայնագրածը: Բոլոր տեսախցիկները թվային են, կառավարելի: Տեսահսկողությունը հանցավորության դեմ պայքարի լավագույն տարբերակներից է: Յուրաքանչյուրը, ով գտնվում է Մոնակոյի տարածքում, պետք է հասկանա, որ հասարակական վայրերում մեր հսկողության տակ է: Այսպես ամբողջովին վերահսկվում է իրավիճակը: Նույնիսկ եթե հանցանք գործողին այդ պահին ոչ ոք չի նկատել, ապա տեսանկարահանումների հիման վրա այդ մարդը մեղավոր է ճանաչվում, կամ հնարավոր է լինում արագ արձագանքել, արագ կանխել հանցագործությունը:

Պետք է հատուկ նշեմ, որ մեր քաղաքացիները հարգանքով են վերաբերվում ոստիկաններին: Քաղաքացին չի կարող անհարգալից վերաբերմունք ցույց տալ ոստիկանին, քանի որ գիտի՝ դրա համար կարող է ենթարկվել ե՛ւ վարչական տուգանքի, ե՛ւ քրեական պատասխանատվության: Ոստիկանի յուրաքանչյուր հրահանգ պետք է անվերապահորեն կատարվի, քանի որ ամեն ինչ արվում է քաղաքացիների անվտանգության համար: Ոստիկանությանը եւ ոստիկանին հարգանքով պետք է վերաբերվի նաեւ մեր երկիր մուտք գործող զբոսաշրջիկը:

Հաջորդ կարեւոր կետն արդարադատությունն է: Օրենք խախտող յուրաքանչյուր անձ ենթարկվում է պատժի:

Կարեւոր գործոն է մեզ մոտ գոյություն ունեցող լուրջ միջազգային կորպորացիան, որը այլ պետությունների ոստիկանական կառույցների հետ Ինտերպոլի, Եվրոպոլի միջոցով գործունեություն է ծավալում: Երկկողմանի կապերի զարգացմանն է միտված այդ կորպորացիայի աշխատանքը. Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ, Ռուսաստան եւ այլ երկրներ համագործակցում են այդ կորպորացիայի հետ:

Երբեք վատ չենք զգում, որ ոստիկանական պետություն ենք, չէ՞ որ միայն ոստիկանների նվիրված աշխատանքի արդյունքում է, որ ունենք ապահով եւ անվտանգ երկիր: Ըստ վիճակագրության՝ օրվա ընթացքում արձանագրվում է օրենքի մեկ կամ երկու խախտում: Ասենք՝ մեքենան ավտոկանգառում կայանելիս վնասել է մեկ այլ մեքենայի...

- Որպես Մոնակոյի ներքին գործերի նախարար, ի՞նչ խորհուրդ կտաք երկիր այցելող զբոսաշրջիկներին:

- Յուրաքանչյուր զբոսաշրջիկ պետք է. հարգի մեր երկրի օրենքները, լինի պատասխանատու, իրերն անուշադրության չմատնի, երբ լուսանկարվում է կամ ինչ-որ բան է լուսանկարում, եթե թանկարժեք մեքենայով է մուտք գործել մեր երկիր, մեքենայի դուռը բաց չթողնի: Սրանք այն խորհուրդներն են, որոնց պետք է հետեւել ցանկացած երկրում:

Ըստ Համացանցի

Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը

Քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը համարվում է սեփականության դեմ ուղղված հանցագործություն:

Ուրիշի գույքի ոչնչացում ասելով հասկանում ենք՝ գույքի վրա ներգործելով այնպիսի վիճակի հասցնելը, որի արդյունքում այն անհնար է դառնում օգտագործել եւ որեւէ վերականգնողական աշխատանքով հնարավոր չէ վերականգնել: Ուրիշի գույքի վնասում ասելով հասկանում ենք՝ գույքի վրա ներգործելով այնպիսի վիճակի հասցնելը, որի դեպքում օգտակար հատկանիշները մասնակիորեն կորսվում են, սակայն հնարավոր է վերականգնել:

Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը եւ վնասելը պետք է տարբերել գույքն անզգուշությամբ ոչնչացնելուց եւ վնասելուց, որը նախատեսված է քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով: Օրինակ՝ եթե անձը վրեժի շարժառիթով հրկիզում է հարեւանի խոտի դեզը, գործ ունենք գույքի դիտավորյալ ոչնչացման հետ, բայց եթե նա կրակի հետ անզգույշ վարվելու հետեւանքով, քամու ազդեցությամբ առաջացնի հրդեհ, եւ դեզն այրվի, ապա գործ կունենանք ուրիշի գույքն անզգուշությամբ ոչնչացնելու դեպքի հետ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ զգալի չափերի գույքային վնաս պատճառելու շարժառիթները բազմազան են. խուլիգանական դրդումներ, վրիժառություն, խանդ, նախանձ, կատաղություն եւ այլն: Եղել են դեպքեր, երբ հանցագործության պատճառ ընդամենը ալկոհոլի չարաշահումն է: Պատահել է, որ ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու պատճառը եղել է վրեժը:

Ներկայացվող դեպքն Արագածոտնի մարզում է կատարվել: Արագածավան գյուղում հրազենային վնասվածքից երկու եղբայր էին մահացել: Կասկածյալը հայտնաբերվել եւ ձերբակալվել էր, առգրավվել էր նաեւ զենքը: Սակայն մահացածների եղբայրը մի խումբ անձանց հետ որոշել էր վրեժ լուծել: Այրել էին մեքենաներ, խոտի դեզեր...

Եղել են դեպքեր, երբ ուրիշի գույքը ոչնչացվել է խուլիգանական դրդումներով: Նման մի դեպք բացահայտեցին ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցները:

Կեսգիշերին մոտ մայրաքաղաքի Բաբաջանյան փողոցում գործող գիշերային կարաոկե-ակումբի բնականոն աշխատանքը խաթարվեց, երբ ժամանցի վայր այցելեց երեք հաճախորդ: Անվտանգության աշխատակցի ներկայանալու կե՞րպը դուրները չէր եկել, թե՞ մի այլ բան՝ վեճի էին բռնվել, վեճն էլ վերածվել էր կռվի:

Անվտանգության աշխատակիցներից մեկը դիմել էր փախուստի, մյուսը թաքնվել էր ներսում: Անկոչ հյուրերը սկսել էին փնտրել նրանց: Այդ ընթացքում ջարդել էին պատուհանների ապակիներն ու դուռը:

Տուժել էր նաեւ պատմության հետ կապ չունեցող, նույն շենքի երկրորդ հարկում գործող գիշերային ակումբը, որտեղ նույնպես որոնումներ էին կատարել՝ ջարդուփշուրը շարունակելով նաեւ այնտեղ:

«Մարդը նման ցանկություն կարող է ունենալ տարբեր դրդապատճառներից ելնելով: Օրինակ՝ երբ ուղղակի հայտնվել է բացասական հույզերի ազդեցության տակ, կարող է նույնիսկ աֆեկտիվ վիճակի հասնել եւ ոչնչացնել գույքը: Հետաքրքիր հոգեբանական մեխանիզմ կա. մարդը թշնամական ապրումներ ունի դիմացինի նկատմամբ, բայց չի ցանկանում կամ կարողանում ֆիզիկապես վնասել նրան, եւ տեղի է ունենում, այսպես ասած, ագրեսիայի տեղափոխման երեւույթ. ագրեսիայի օբյեկտը փոխվում է: Նա կարող է ձեռքն ընկած իրը կոտրել, պատին խփել, պատառոտել: Բայց կան դեպքեր, երբ անձն ուրիշի գույքը ոչնչացնում է միանգամայն մտածված: Այստեղ դարձյալ պատճառները կարող են տարբեր լինել, ասենք՝ նախանձը՝ նա ունի, ես չունեմ, այնպես անեմ՝ նա էլ չունենա, կամ վրեժը. ինչ-որ պատճառով մարդը վրեժխնդիր է դիմացինի նկատմամբ, բայց ինչ-ինչ պատճառով չի կարող նրան անձամբ վնասել եւ, ահա, որոշում է ոչնչացնել նրա գույքը»,- պարզաբանում է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Նալչաջյանը:

Ագրեսիվ պահվածքը նպատակին հասնելու միջոց չէ, այլ հետեւանք այս կամ այն իրողության, ինչը շտկելու համար սթափ դատողություն, օրինահարգ վարք եւ զսպվածություն է պահանջվում:

Հ. Պ.

Կայծի ծառահատումներ

Ոստիկանության Գորիսի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Նուռնուխ գյուղի վարչական շրջանի «Կատարի» տարածքում ապօրինի ծառահատումներ են եղել: Ոստիկանների ձեռնարկած միջոցառումներով պարզվեց, որ սեպտեմբերի 26-ին Նուռնուխ գյուղի քսանհինգ տարեկան երկու բնակիչներ, առանց համապատասխան թույլտվության, նշված տարածքում հատել են բոխի ու կաղնի, եւ ծառերը բարձել են «Զիլ» մակնիշի, առանց համարանիշի մեքենան:

Մեքենան հայտնաբերվել եւ տեղափոխվել է ոստիկանության Գորիսի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Հարուցվել է քրեական գործ:

Հոկտեմբերի 15-ին ոստիկանության Գորիսի բաժնի ծառայողները Գորիսի Սյունիքի փողոցում ապօրինի ծառահատման կասկածանքով կանգնեցրել են «Ֆորդ» մակնիշի մեքենա, որի մեջ եղել է 3 խմ վառելափայտ: Մեքենան տեղափոխվել է ոստիկանության Գորիսի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Հոկտեմբերի 20-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները Կողբ գյուղի «Թեղանց փոս» կոչվող տեղամասի մոտ կանգնեցրել են «ԳԱԶ-63» մակնիշի մեքենա, որը բարձված էր շուրջ 5 խմ փայտանյութով: 47-ամյա վարորդը փայտանյութի օրինականության վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացրել:

Նախապատրաստվում են նյութեր:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Մարդա՞ւ, թե՞ մարդաւ

Հիսունվեց տարեկան տղամարդն իրենց գյուղի հանդերում ոչ թե գյուղատնտեսական նկատառումներով, այլ թմրանյութի պաշար հայթայթելու համար էր հիմնականում լինում: Հողագործությամբ էլ է զբաղվում, բայց՝ ստիպված. հողի հետ աշխատելու սեր չունի: Փոխարենը՝ սեր ունի թմրանյութի հետ: Ուստի բնության գիրկ դուրս գալն ավելի հաճելի է լինում, երբ գնում է կանեփի բերքահավաքի:

Թմրամոլության երեսուն տարվա ստաժ ունի լոռեցի Սարգիս Հովսեփյանը: Մարիխուանան ու հաշիշը, նրա պատկերացմամբ, իր մշտական հոդացավերը բուժելու միակ միջոցն են, ու, որպես ցավազրկող, երեսուն տարի միայն թմրանյութ է օգտագործում:

Ինքնաբուժությամբ զբաղվող Սարգսի տանը թմրանյութի պաշար հայտնաբերեցին ոստիկանության Թումանյանի բաժնի քրեական հետախույզները:

Դատանարկոլոգիական փորձաքննության եզրակացությամբ՝ Սարգիս Հովսեփյանը կանաբինոիդների գործածման հետեւանքով ունի հոգեկան ու վարքային խանգարումներ, տառապում է կախվածության համախտանիշով, ունի հարկադիր բուժման կարիք:

Երեսուն տարվա կախվածությանը հրաժեշտ տալն, ինչ խոսք, դժվար է, բայց՝ անհրաժեշտ ու ոչ անհնար: Սարգիս Հովսեփյանը գիտակցում է դա, բայց հարկադիր բուժումը որքա՞ն արդյունավետ կլինի՝ կախված է նրա վճռականությունից, կամքից:

Մեր մյուս հերոսները Տավուշի մարզից են՝ 34-ամյա Սպարտակ Մանոյանն ու 28-ամյա Ռուբեն Հայրումյանը:

Հոկտեմբերի 14-ի երեկոյան Օհանյան փողոցում վիճում էին: Վիճաբանության ձայնը հասավ տարածքում ծառայություն իրականացնող պարեկապահակետային ծառայության ոստիկաններին: Տեսնելով ոստիկաններին՝ փորձեցին փախուստի դիմել: Հետո պիտի պարզվեր՝ ոստիկաններից խուսափելու լուրջ պատճառ ունեին, ու մինչ նրանց մոտենալը՝ ազատվեցին այդ «պատճառից»: Բայց բախտները չբերեց: Ոստիկանների աչքից չվրիպեց, որ վիճաբանողներից մեկն ինչ-որ բան շպրտեց: Ծխախոտատուփ էր, բայց ոչ թե ծխախոտի գլանակներով, այլ՝ թմրանյութի:

Թմրանյութի ծագումնաբանության մասին լռեցին: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց, որ երիտասարդները թմրանյութը ձեռք էին բերել համաքաղաքացի Արտաշ Մխիթարյանից: Վեճն էլ վճարի շուրջ էր: Սպարտակը, որ թմրանյութի համար նախորդ անգամ վճարել էր նաեւ Ռուբենի փոխարեն, հիմա հրաժարվում էր՝ միաժամանակ պահանջելով պարտքը: Մինչդեռ Ռուբենը, թմրանյութի անզուսպ ցանկություն ունենալով հանդերձ, նույնիսկ այս անգամվա չափաբաժնի համար վճարելու փող չուներ, ուր մնաց՝ պարտքը տար:

Ոստիկանությունում թմրամոլ երիտասարդներին միացավ նաեւ թմրանյութ իրացնողը՝ Արտաշ Մխիթարյանը:

Խուզարկությամբ Արտաշ Մխիթարյանի ավտոտնակից մեկուկես կիլոգրամ մարիխուանա հայտնաբերվեց: Չուշացավ նաեւ խոստովանությունը՝ մի քանի մշտական «հաճախորդ» ունի:

Հարուցված քրեական գործով քննություն է կատարվում:

Պատասխանատվությա՞ն բացակայություն

Սյունիքի մարզի բնակիչ Սուրեն Հակոբյանը քրեական գործի «հերոս» դարձավ «պատահականորեն»: Բանն այն է, որ նախապատրաստված նյութերի շրջանակում նրա տուն խուզարկության եկած ոստիկանության ծառայողներն այլ բան էին փնտրում: Փնտրածը չգտան՝ գտան ապօրինի պահվող զենք-զինամթերք:

Քրեական հետախույզները ոչ միայն Սուրեն Հակոբյանի, այլեւ նրա աշխատավայրի՝ փակ բաժնետիրական ընկերության գրեթե բոլոր աշխատակիցների տանը խուզարկություն կատարեցին: Օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ ընկերության մասնաճյուղերից մեկի տարածքից գողացել են 10-15 տոննա մետաղի ջարդոն՝ ընկերությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի վնաս:

Փաստով հարուցված քրեական գործի շրջանակներում՝ դատարանի կողմից որոշում կայացվեց խուզարկել ընկերության աշխատակիցների տները. առաջին կասկածյալը նրանք էին:

Ջարդոնի թեման թողնելով մեկ այլ հրապարակման (հանցագործության բացահայտման ուղղությամբ միջոցառումները շարունակվում են)՝ դառնանք Սուրեն Հակոբյանի գործին:

Ոստիկանության աշխատակիցները, փաստորեն, մետաղի ջարդոն էին փնտրում, որ հանցագործությունը բացահայտեն, բայց բացահայտեցին մեկ այլ հանցագործություն, որի սահմանումն ու պատասխանատվության ենթարկվելը քրեական օրենսգրքի 235 հոդվածն է նախատեսում:

Սուրեն Հակոբյանի հանցավոր պահուստը ավտոտնակի չհրկիզվող պահարանում էր: Խոստովանեց: Գիտակցում էր, որ քրեական պատասխանատվության ենթակա արարք է ապօրինի զենք ու ռազմամթերք պահելը, քաղաքացիական պատասխանատվության պակասը խանգարում էր, որ այն կամովի ներկայացներ ոստիկանություն:

Չներկայացրեց: Հայտնաբերեցին ոստիկանության աշխատակիցները, եւ ինքը կորցրեց կամավոր հանձնելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Թմրամիջոց հետախուզվողի մոտ

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 19-ին Ծերենցի փողոցից բերման ենթարկվեց հունիսի 28-ից խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու մեղադրանքով հետախուզվող 46-ամյա մի տղամարդ:

Անձնական խուզարկությամբ նրա պայուսակից հայտնաբերվեց շագանակագույն ու սպիտակ հեղուկ լցված՝ մեկական, եւ չօգտագործված՝ չորս ներարկիչ, դարնիցայի ու ցիկլադոլի՝ երեքական եւ ցիտրամոնի՝ տասը հաբ, դեղի սրվակում սպիտակ փոշենման զանգված, բամբակ, մոխրացած հետքերով շերեփ, կպչուն ժապավեններ եւ 17 սմ երկարությամբ դանակ:

Կատարվում է քննություն:

Ոստիկանները բացահայտել են գողությունը

Հոկտեմբերի 10-ին ոստիկանություն դիմած քաղաքացին հայտնել էր, որ Հանրապետության հրապարակում գողացել են իր դրամապանակը, որի մեջ եղել է փող, երկու երկրի անձնագրերի նույնականացման, բանկային, ապահովագրական եւ կուտակային քարտեր:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողների ձեռնարկած միջոցառման արդյունքում հոկտեմբերի 14-ին պարզվեց գողությունը կատարած անձի ինքնությունը. 43-ամյա տղամարդը հայտնաբերվեց Ֆրանսիայի հրապարակում եւ, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց: Նա տվել է խոստովանական բացատրություն:

Նյութեր են նախապատրաստվում:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Կարգի մասք

Հոկտեմբերի լույս 20-ի գիշերը, ժամը 3.50-ի սահմաններում, ոստիկանության Շենգավիթի բաժնում ահազանգ է ստացվել, որ բջջային օպերատորներից մեկի Բագրատունյաց պողոտայի վաճառքի եւ սպասարկման սրահ երկու անձ է մտել:

Բաժնի օպերատիվ խմբի եւ պարեկային ոստիկանների արագ արձագանքման շնորհիվ սպասարկման սրահ մտած տղամարդիկ չէին հասցրել ո՛չ գողություն անել, ո՛չ էլ լքել տարածքը: Նրանք բերման ենթարկվեցին ոստիկանության Շենգավիթի բաժին ու խոստովանեցին կատարածը:

Պարզվեց, որ Երեւանի բնակիչներ՝ 38 եւ 46-ամյա տղամարդիկ բջջային օպերատորի սպասարկման սրահ էին մտել տեխնիկական միջոցների գործադրմամբ ճաղավանդակն ու պատուհանը կոտրելով:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Հոկտեմբերի 28-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի եւ Կենտրոնական բաժինների ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Ֆրիկի փողոցից ոստիկանություն բերման է ենթարկվել 35-ամյա մի քաղաքացի, որը ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր քրեական գործի 325 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 28-ին Վանաձորի Բաղրամյան փողոցից բերման է ենթարկվել Վանաձորի 25-ամյա մի բնակիչ, որը ոստիկանության Տարոնի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 333 եւ 34-176 հոդվածների մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 28-ին Երեւանի Դավիթաշեն թաղամասից բերման է ենթարկվել Օձուն գյուղի 58-ամյա մի բնակիչ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 329 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 28-ին ոստիկանության բաժին է ներկայացել 39-ամյա ՀՀ քաղաքացի, որը 2018 թ. սեպտեմբերից ՌԴ իրավապահների կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 322 հոդվածի (սահմանն ապօրինի հատելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Նոր Հաճընի բաժանմունքի ծառայողները, ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության ծառայողների հետ համատեղ ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելով, հոկտեմբերի 28-ին Երեւանի Դավիթաշեն թաղամասից ոստիկանության Նաիրիի բաժին բերման են ենթարկել Ապարանի 51-ամյա մի բնակչի, որը 2009 թ. ապրիլից հետախուզվում էր քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների մեղադրանքներով:

◆

Հոկտեմբերի 29-ին, իրացնելով օպերատիվ տվյալները, Կենտրոնականի քրեական հետախույզները Մաշտոցի պողոտայից բերման են ենթարկել մշտական բնակության եւ հաշվառման վայր չունեցող 22-ամյա մի երիտասարդի, որը հետախուզվում էր կողոպուտի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ հոկտեմբերի 29-ին Գերմանիայի քաղաքացի, 22-ամյա հայ երիտասարդը Ռուսաստանից ներկայացել է Բագրատաշենի սահմանային անցակետ, որտեղից էլ ներկայացվել է ոստիկանություն: Նա 2018 թ. հուլիսից հետախուզվում էր կողոպուտի փորձ կատարելու մեղադրանքով:

◆

Գուգարքի ոստիկանների ձեռնարկած միջոցառումների եւ բացատրական աշխատանքի շնորհիվ հոկտեմբերի 29-ին ինքնակամ բաժին է ներկայացել Դարպաս գյուղի բնակիչ 35-ամյա մի տղամարդ, որը 2018 թ. հունվարից հետախուզվում էր ՌԴ Մոսկվա քաղաքի իրավապահների կողմից (ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելը, ինչի հետեւանքով տուժողին հասցվել է ծանր մարմնական վնասվածք):

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Երկարավիզ թռչուն
Ֆրանս. ֆիզիկոս, քաղ. գործիչ
Հռոմ. Աֆրոդիտեն / ... Բրյուսով
Գաճաճ
Սրածայր ծող
Լուչանո ...
Հայ թագավոր / Բյուրեղային նյութ
Դաշնամուրի նախատիպ
Ճապոն. քաղաք / Հատակը փայլեցնող
3,14 / Հեկտար / ... եւ Բաղդասար
Մալդիվ. Հանրապետութ.
Կոնֆետ
Սենդամթերք
Ջրանցք, Կենտր. Ամերիկա / Ջուկ
Նիամեյ / Լուսնի փուլ
Լեռնազանգված, Վասպուրական
Հոլիվուդի դերասան
Խորհրդ. վերին պալատ
Հռոմեացի բժիշկ եւ բնագետ
Պալատի պաշտոնյա / Խոտաբույս
Երկրի աստվածուհին
Չեխ երգահան
Բանաստեղծություն
«Արսենալի» մարզիչը
Զրադաշտ. կրոնի քուրմ
ՌԴ մարզկենտրոն
Դպրոցական սենյակ
Նեցուկ, պաշտպան
Պտղի միջուկը
... Սարգսյան
Ավստրիացի նվագավար
Բաժանմունքի ...
Սպիտակ ծենակավ
... Չեխով
Հին հուն. հրապարակ
14-րդ դ. հայ փիլիսոփա / Ռուս միտրոպոլիտ
4047 քմ / ... Ալեգրովա
Նաբոկով, վեպ / Անասնակեր
Թումանյան, հերոս
... էմե / Արքայական սպասավոր
Դասընթաց / Դուդուկ, սրինգ
Գրենական պիտույք
Խմբապար / Ժողով / Լիտվայի դրամ
Քիմիական տարր
Թշնամի
Շումեր. աստվածութ.
«... հանրապետություն»
Մարկոնի, Պոպով
... Արեշ / Կղզի, Վանա լիճ / ... ու զրահ
Ժակ ... Կուստո
Վայրի ավանակ / ... Զաքարյան
Ռուս կենդանավարժ, կրկես
Սալոմեա ... / Վարակիչ հիվանդութ.
... Օռլովա
Սփյուռքահայ գրող
Ամենափոքր թռչունը
Եգիպտ. աստված / Քաղաք, Կեմերովոյի մ.
Ջինվ. տարբերանշան / Աման
Առեւտրի տեղ
Խաշխաշ բույսը / ... - կոլա
Կապիտան, մայոր / ... դ' Իվուար
Կերպար
Գետ, Ալթայ / Կիլիկիա
Շորի կտոր
Սկանդինավցի ծովահեն
Սապատ
Ադրիանո ... / Նոտա
Գրետա ...
Ամերիկ. երգչուհի / Ֆիզիկայի բաժին
Դելֆին, կաշալոտ
Մետաքսե գործվածք
Նկարիչ, «Մարատի մահը»
Տոթ / Պանի, մադամ
Հանածո խեժ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ ուշակ

♈ **Խոյ** - Չեն բացառվում անսպասելի հանդիպումները, որոնք կուրախացնեն ձեզ:

♉ **Ցուլ** - Ամսվա սկիզբը բարենպաստ կլինի. կյանքի բոլոր ոլորտներում հնարավոր են դրական փոփոխություններ:

♊ **Երկվորյակ** - Եթե ի հայտ են գալիս նոր գաղափարներ, մի հետաձգեք դրանց իրականացումը:

♋ **Խեցգետին** - Երբեմն ինչ-որ նոր բան մտցնելու ցանկությունը դրդում է ձեզ չմտածված արարքների:

♌ **Առյուծ** - Պետք է հաղթահարեք բազմաթիվ փորձություններ: Խնդիրները ինքնուրույն հաղթահարեք:

♍ **Կույս** - Ուժեղ կլինի դրական միտումների ազդեցությունը, բայց դա չի նշանակում, որ ձեզ կհաջողվի խուսափել խնդիրներից:

♎ **Կշեռք** - Հաճախ անհավասար պայքարում պետք է որոշումներ կայացնեք եւ գործեք անբարենպաստ պայմաններում:

♏ **Կարիճ** - Ամսվա սկիզբը շատ հակասական ու անհանգիստ կլինի: Հատկապես շատ փորձություններ են բաժին ընկնում երիտասարդ կարիճներին:

♐ **Աղեղնավոր** - Կարող եք շատ բան հասցնել, եթե չծուլանաք եւ չվախենաք: Որպեսզի ձեռնամուխ լինեք նոր գործերի, պետք է խիզախ լինեք:

♑ **Այծեղջյուր** - Ավելի լավ է չձեռնարկել կարեւոր բաներ, բայց իրավիճակն, այնուամենայնիվ կպահանջի վճռական գործողություններ:

♒ **Ջրհոս** - Կհաղթի դրական միտումների ազդեցությունը: Առավել ուշագրավ է նրանց համար, ովքեր զբաղված են լուրջ հարցեր որոշելով:

♓ **Ձուկ** - Անհանգստության համար առիթներ կառաջանան, բայց դրական միտումների ազդեցությունը ուժեղ կլինի:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.d4-e5 f8:f4 2.e5:a1x

Խնդիր N2 1.f4-e5 h6:f4 2.e5:h2 b8:e5 3.h2:c7:a1x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 31.10.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: